

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ 2012թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

«ԷԿՈՆՈՄԻԿԱ-ԱՌԻԴԻՏ»

«ECONOMICS-AUDIT»

ՍԱՀՄԱՆՍՓԱԿ



LIMITED LIABILITY

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

COMPANY

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա ԱԾ N 085 Տրված 15.12.2010թ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից. 378240, ք. Երևան, Կորյունի 7/1, 9 et. 1-revan. st. Koryun 7/1, 9

Հեռ. /Tel/Բջջ. /094-66-11-91, /010/ 54-09-08

14.02.13թ

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի մասնակցին

2012 թ. տարեկան

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի մասնակցին

Մեր կողմից իրականացվել է «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները բաղկացած հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից: